

ԿԼԱՍԻԿ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԽՈՐ ՇԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՊԱՐՇՈՎ

Սովետահայ գրականագիտությունը վերջին տարիների ընթացքում ստեղծել է լուրջ տրադիցիա հայ գրականության զարգացման պրոցեսի գիտական լուսարանման ուղղությամբ: Հետզհետե հաղթահարվում են գրականության պատմությունը հասարակական գիտակցության մյուս ձևերի պատմության հետ նույնացնելու փորձերը, մշակվում են սկզբունքներ, որոնք բխում են գրականության ներքին օրինաչափություններից: Այդ իր արտահայտությունն է գտել ինչպես դասական գրականության ականավոր ներկայացուցիչներին՝ Արավյանին, Բաֆֆուն, Մուրացանին, Շիրվանզադեին, Իսահակյանին նվիրված մենագրություններում, նույնպես և հայ գրականության ընթացքը բացահայտող ընդհանուր բնույթի աշխատություններում: Այժմ կարելի է պնդել, որ գրականագիտությունը հաստատորեն կանգնել է գրականության պատմության ամբողջ հարստությունը և բարդությունը բազմակողմանիորեն ընդգրկելու ուղով: Այս տեսակետից բնորոշ են Մ. Մկրյանի «Հայ վիպասանության պատմությունից» աշխատությունը և Հ. Թամրազյանի «Հայ գրականության պատմությունը XIX դարի վերջին և XX դարի սկզբին» գաղափարական ձեռնարկը:

Թեև այս աշխատությունները տարբեր են իրենց բնույթով—մեկում առանձին ակնարկներով են լուսարանվում հայ գրականության պատմության հարցերը, մյուսում սխտեմատիկ շարադրանքի ձևով—նրանց ընդհանուր արժանիքն այն է, որ գրականության զարգացման պրոցեսը չի հանգեցվում ինչ որ կանխակալ սխեմաների, այլ փորձ է արվում վեր հանել նրա կենդանի պատկերը՝ ստեղծագործական ոճերի փոփոխություններով, ինքնատիպ գրական անհատականություններով, ժանրային բազմազանությամբ և այլն: Անշուշտ, այդ ուղղությամբ դեռ շատ անելիքներ ունի մեր գրականագիտությունը: Անցյալում հարցը սպառված է համարվել գրողի ստեղծագործական մեթոդի որոշմամբ, իսկ թե գրողի մոտ տվյալ մեթոդը, ասինքն ռեալիստական, ինչպիսի երանգավորմամբ, առանձնահատկությամբ է դրսևորվում, այդ խնդիրը մատնվում էր անուշադրության: Նման մոտեցումը բնականաբար արգելակում էր հետևելու, թե գրական ուղղությունների զարգացման ընթացքում ինչպիսի ձևափոխումներ են տեղի ունենում, ինչպես են ընդլայնվում կամ նվազում տվյալ մեթոդի ճանաչողական, արտահայտչական կարելիությունները:

Գրականության պատմության հունը նեղացնելու տենդենցը շատ է փաստել մեր անցյալի առաջավոր կուլտուրայի նշանակության բացահայտմանը՝ նրա ամբողջականության մեջ: Գրականությունը աղքատացնելու արտահայտություններից մեկն է նաև այն տեսակետը, ըստ որի գրականության պատմությունը ոչ այլ ինչ է, քան ռեալիզմի և ռոմանտիզմի պայքարի պատմության մի սխեմա, որ մեխանիկորեն նույնացնում է գրական հոսանքների պայքարը մատերիալիզմի և իդեալիզմի հետ: Նման հարցադրման հետևանքով, ռոմանտիզմը, որպես իրականության ճանաչման արգասավոր մեթոդներից մեկը, ժխտվել է և թերագնահատվել: Ահա այդ կարևոր հարցի տեսություն և պատմությանն է հանգամանորեն անդրադառնում Մ. Մկրյանը իր գրքի բաժիններից մեկում: Նա իրավացիորեն նշում է, որ վերջերս տենդենց է նկատվում կլասիկների գնահատման չափանիշ դարձնել նրանց ռեալիստ

լինելու կամ չլինելու պարագան: Գրողի ժառանգության արժեքավորման միակ ելակետը դարձվում էր նրա պատկանելիությունը ռեալիզմին:

Ռեալիստական ուղղությունը, իրոք, գրականության պատմության մեջ ամենակենսունակ, հարուստ և բեղմնավորն է եղել, բայց դա ամենեին չի նշանակում, որ այլ ստեղծագործական մեթոդներ մարդկության գեղարվեստական մտքի զարգացման տարբեր շրջաններում չեն ունեցել կարևոր նշանակություն: Այնպիսի մեթոդներով, ինչպիսիք են, օրինակ, կլասիցիզմը և ռոմանտիզմը, ստեղծվել են Ռասինի, Կոռնելի, Բյալոնի, Հյուգոյի երկերը, որոնք իրավամբ մտել են համաշխարհային կուլտուրայի գանձարանը: Ռոմանտիզմի զարգացումը, իհարկե, ունի որոշ յուրահատուկ բնույթ: Եթե կլասիցիզմը նախորդել է XIX դարի կլասիկ ռեալիստական գրականությանը, ապա ռոմանտիզմը գոյություն է ունեցել և զարգացել նաև այն գրական էպոխաներում, երբ ռեալիզմը տիրապետող է եղել: XIX դարի առաջին կեսը եվրոպական գրականության մեջ նշանավորվեց ռեալիզմի հաղթանակով, բայց հենց այդ նույն շրջանում են ստեղծագործում մի շարք ռոմանտիկ գրողներ: Այդ երևույթը բնորոշ է նաև հայ գրականությանը:

Մենք չենք կարող հաշվի չառնել ռեալիզմի և ռոմանտիզմի զարգացման այդ օրինաչափությունը և դուրս մղել ռոմանտիզմը գրականության պատմությունից: Մ. Մկրյանը իրավացիորեն նշում է. «Ռոմանտիզմը իբրև ստեղծագործական մեթոդ կամ բոլորովին չքանում է հայ գրականության պատմության միջից, կամ մնում է լոկ իբրև գրողի աշխարհայացքային ու ստեղծագործության թուլության արտահայտություն» (էջ 115—116): Այս ցավալի իրողությունը հետևանք է այն սխալ հարցադրման, թե իբրև ռոմանտիկականությունը լոկ գաղափարական երևույթ է, որ ռոմանտիկը հետևում է իրականության ճշմարտացի արտացոլումից: Մա, իհարկե, անընդունելի և թյուր ըմբռնում է, որը ոչ մի առնչություն չունի ռոմանտիկական գրականության պրակտիկայի հետ: Ռոմանտիզմը, ըստ մարքս-լենինյան էսթետիկայի, իրականությունը գեղարվեստորեն ճանաչելու յուրահատուկ եղանակներից մեկն է: Նա նախ և առաջ գեղարվեստական մեթոդ է: Որպես այդպիսին պրոգրեսիվ ռոմանտիզմը երբեք չէր հասնի ներգործման վիթխարի ուժի, և թե նա հիմնված լիներ կյանքի երևույթները խեղաթյուրելու սկզբունքի վրա: Մ. Մկրյանը ճիշտ կերպով ընդգծում է, որ համաշխարհային գրականության պատմության փորձը ցույց է տալիս, որ ընդհանրապես իրական կյանքի ճշմարտացի պատկերումը հատուկ է նաև պրոգրեսիվ ռոմանտիզմի խոշոր ներկայացուցիչներին, մի հանգամանք, առանց որի թերևս անհասկանալի մնար նրանց թողած ահագին ազդեցությունը և ունեցած ժողովրդականությունը (էջ 125):

Մեծ են ռեալիզմի և պրոգրեսիվ ռոմանտիզմի ընդհանրությունները, այդ երկու մեթոդներն էլ ծառայում են իրականության ճանաչմանը: Խոսելով ռեալիզմի և ռոմանտիզմի ընդհանրությունների և առանձնահատկությունների մասին, պետք է խուսափել թե՛ նրանց նույնացումից և թե՛ բեկոացումից: Ռեալիզմին հատուկ տարրերը անպայման կարելի է գտնել ռոմանտիկական երկերում և ընդհակառակը ռոմանտիզմին հատուկ որոշ գծեր՝ ռեալիստական երկերում: Ռեալիստական և ռոմանտիկական մեթոդների էությունը բնութագրելիս պետք է ելնել երկերի ամբողջականությունը բնութագրող առանձնահատկությունից: Արդարացի է Մ. Մկրյանի այն հարցադրումը, թե

«Ինչպիսի արդյունքների կհասնենք գրականության պատմության երևույթները ուսումնասիրելիս, եթե գրողների ստեղծագործական տարրեր մեթոդների մասին խոսվի անջատ նրանց երկերի ամբողջությունը ներկայացնող մյուս կողմերից (էջ 117)»:

Անդրադառնալով ռոմանտիզմի բնորոշ առանձնահատկություններին, որոնք առաջադրվել են գրականագետների կողմից, այն է՝ հակումը դեպի արտակարգ և արտասովոր սլուծեններն ու կերպարները, խորհրդավոր դրությունները, կոնտրաստները և այլն, Մ. Մկրյանը նշում է, որ դրանք առանձին վերցրած դեռ բավարար չեն գրողի ուղղությունը որոշելու համար. «Համաշխարհային ռոմանտիկական գրականության փորձը, — գրում է նա, — այնպիսի բազմազանություն ունի, որ այս ձևերի թվարկմամբ դժվար է սպառել այն»։ Իսկ անկասկած ճիշտ է:

Իրականը այն է, որ Մ. Մկրյանը ռոմանտիզմի առանձնահատկությունները վերլուծում է կոնկրետ գրական նյութի՝ հատկապես Բաֆֆու և Մուրացանի ստեղծագործությունների օրինակի վրա: Մ. Մկրյանը ռոմանտիզմի ձևակերպում չի տալիս, սակայն նրա դիտողությունները հանգում են հետևյալին. ռոմանտիկները ձգտում են պատկերել այնպիսի տիպեր, որոնք ավտոմատ են ապագան (այստեղ նա հենվում է Բաֆֆու կարծիքի վրա), ռոմանտիկականությունը դրսևորվում է իրականության վերափոխման ոչ ունալ ուղիների որոնումներում: Այս հատկանիշներն է նա տեսնում Բաֆֆու և Մուրացանի ստեղծագործություններում: Բաֆֆու «Սենթ» վեպի գրական հերոսների ռոմանտիկականությունը հեղինակը գիտում է նրանց առաջադրած կյանքի վերափոխման պատրանքների, Մուրացանի ստեղծագործությունում՝ գյուղի չափերը բուժելու գրողի նախկին լենթագրության մեջ: Մեր կարծիքով, այդ դիտողություններում անտեսվում է մի հանգամանք՝ նախ միշտ չէ, որ ռոմանտիկականությունը արտահայտվել է ապագայի ուղիների որոնման մեջ, և ապա կարող ենք մենք արդյոք այդ հատկությունից զրկել ունալիստական գրականությունը:

Ռոմանտիզմի բնութագրման հարցում պետք է միշտ դիմել Մարքսի և Էնգելսի դիտողություններին շեքսպիրականության և շիլլերականության վերաբերյալ: Մարքսիզմի կլասիկները շիլլերականության մեջ մատնանշում են անհատականությանը բացառիկ հատկություններ վերագրելը՝ Քենադատելով Լասսալի «Ֆրանց Ֆոն Ջիկինգեն» դրաման, Մարքսը և Էնգելսը ընդգծում են, որ շիլլերականությունը այստեղ արտահայտվում է անհատի հերոսականությունը վերագրվող չափազանցությունների մեջ և որ իսկական տրագիկական կոլիզիան հնարավոր է հասարակական լայն խավերի բախման մեջ:

Մարքսի և Էնգելսի խորաթափանց դիտողությունը ռոմանտիկականության մասին իր հաստատումն է գտնում ռոմանտիզմի կլասիկ ներկայացուցիչների ստեղծագործություններում: Իրանց ճշտության փալլուն ապացույցն է հենց Բաֆֆու ստեղծագործությունը: Բաֆֆին լենթագրում էր, որ ուժեղ հերոսական անհատներն ի վիճակի են ճակատագրական դեր կատարելու ժողովրդի կյանքում:

Կյանքի երևույթների նման ընկալումից էլ բխում են գեղարվեստական արտահայտչական մի շարք ուրույն եղանակներ, որոնցից մի քանիսը հիշատակվում է Մ. Մկրյանի գրքում:

Ռեֆորմատիզմի պատմությունն ու տեսությունը նվիրված ուսումնասիրությունը Մ. Մկրյանի աշխատության հատվածներից մեկն է։ Սակայն մենք հարկ համարեցինք հատկապես ծանրանալ այդ խնդրի վրա, հաշվի առնելով, որ ռեֆորմատիզմի հարցը մեր գրականագիտության ամենապիճեկի պրոբլեմներից է։ Եվ ուրախալի է, որ Մ. Մկրյանը համարձակ կերպով առաջ է քաշում այդ հարցերը, անելով մի շարք հետաքրքիր և նուրբ գիտողություններ։

Մ. Մկրյանի այս աշխատությունը աչքի է ընկնում գրական փաստական նյութերի վերլուծությունների և տեսական ընդհանրացումներ կատարելու հմտությամբ։ Արտվյանին, Բաֆֆուն, Նար-Դոսին նվիրված ուսումնասիրություններում Մ. Մկրյանը ցուցաբերում է երկերի գեղարվեստական հյուսվածքի մեջ թափանցելու իր անժխտելի կարողությունը։ Անցյալի գրողների ստեղծագործությունները գնահատելիս նա կարողանում է որոշել նրանց տեղը գրականության պատմության ընդհանուր պրոցեսում։

Հայկական գրականության պատմության թե նոր և թե հին շրջանի ընդհանուր պատկերի Մ. Մկրյանի լավատեղյակությունը դրսևորվում է հատկապես «Նալբանդյանը և հայ հին գրականության պատմության մի քանի հարցեր» հոդվածում։

Երականության պատմության խնդիրները Մ. Մկրյանի աշխատությունում չեն զրկում ինչ որ կազապարի մեջ, նրանք բխում են գրականության կենդանի պրոցեսի խոր խմացությունից։ Այս նրա աշխատության ամենակարևոր արժանիքն է։

* * *

Հ. Թամրազյանի դասագիրքը ընդգրկում է հայ գրականության պատմության XIX դարի մեծի և XX դարի սկզբի շրջանը. այստեղ գնահատվում են Շիրվանզադեի, Մուրացանի, Նար-Դոսի, Թումանյանի, Իսահակյանի, Վարուժանի, Տերյանի ստեղծագործությունները։ Նրա դասագրքի էական արժանիքն այն է, որ գրականության պատմությունը դիտվում է իր այն հատկությունների մեջ, որոնք բնութագրում են գրականությունը նախ և առաջ որպես իրականության ճանաչման յուրահատուկ ձև։

Երականության պատմության համար ամենագլխավորն է ձիշտ կերպով որոշել ուսումնասիրվող առարկայի բնույթը։ Շատ է խոսվում գրականության և հասարակական գիտակցության այլ ձևերի ընդհանրությունների կամ առանձնահատկությունների մասին, բայց առաջժամ, դժբախտաբար, միայն երկչոտ փորձեր են արվում կիրառելու այդ պատկերացումները գրական երևույթների մեկնաբանության մեջ։

Տեսականորեն ընդունելով գրականության սպեցիֆիկան, նրա պատմությունը շատ հաճախ վերածվում է երկերի բովանդակության վերապատումների, սոցիոլոգիական այլևայլ դատողությունների, փաստական նյութի կուտակման և այլն։ Բնական է, որ այս բոլորը շատ հեռու է իրականության գեղարվեստական անդրադարձման պատմությունը ներկայացնելուց։ Հ. Թամրազյանի դասագիրքը աչքի է ընկնում գրականության ոգու էության խոր գզացողությամբ։ Կարևորն այն է, որ նրա գիրքը ընթերցողին տանում է գրականության աշխարհը, մշակում է սթիստիկական ճաշակ, սեր արթնացնում դեպի հայրենի կուլտուրան։

Նա կարողանում է բացահայտել մեր անցյալի առաջավոր գրողների ստեղծագործությունների արժեքը ոչ թե պիտակներ կպցնելով, «մեծ», «ակա-նավոր», «գարմանալի», «վարպետորեն» և նման ածականներ շտալելով, այլ մասնագիտական հետաքրքիր դիտողություններով, կոաշումներով: Աշակերտը հնարավորություն է ձեռք բերում համոզվելու, թե ինչով է մեծ թումանյանը կամ Մուրացանը, Շիրվանզադեն կամ Բազակյանը. չէ որ հարցը միայն գրո-դի շոշափած թեմայի մեջ չէ: Թեմատիկան դեռևս պատկերացում չի կարող տալ գրողի տեղի և նշանակության մասին:

Վ. Ի. Լենինը, գնահատելով Լև Տոլստոյի ստեղծագործությունը, մատ-նանշում է, որ մեծ գրողի բարձրացրած հարցերը թերևս նորություն չէին գրականության համար, բայց արվեստագետը կարողացել է գեղարվեստորեն լու-սաբանել դրանք այնպիսի խորությամբ, որ հիմքից խարխուլ է միապետու-թյան բոլոր սյուները. «Տոլստոյի քննադատությունը նորություն չէ,—գրում է Լենինը,—նա չի ասել որևէ այնպիսի բան, որը ըրեսրց շատ առաջ ասած չլինեին թե եվրոպական և թե ռուսական գրականության մեջ աշխատավոր-ների կողմնակիցները: Ինչպես Տոլստոյի քննադատության յուրահատկությունն ու նրա պատմական նշանակությունն այն է, որ նա միայն հանճարեղ ար-վեստագետին հատուկ ուժով է արտահայտում մատնանշված ժամանակաշր-ջանի միաստատանի և հատկապես գյուղական, գյուղացիական միաստատանի ժո-ղովրդական ամենալայն մասսաների հայացքների բեկումը: Ահա իրականության էական կողմերի գեղարվեստական արտացոլման ուժն է, որ պետք է մա-տուցվի աշակերտին: Այդպիսով աշակերտը գրական երկերի գնահատման չա-փանիշ է ձեռք բերում, ի վիճակի է լինում ինքնուրույնաբար կողմնորոշվել գրական երևույթներում:

Դասագրքում գրողները ներկայանում են իրենց ստեղծագործական ան-հատկանություններով: Հեղինակը գտնում է ամեն մի գրողի ստեղծագործությունը վերլուծելու բանալին: Նա գրողից-գրող չի կրկնում իր վերլուծությունների եղանակը: Բացահայտելով գրողի ստեղծագործության համար բնութագրական հատկանիշները, նա ծանրանում է մերթ մի, մերթ մյուս կողմի վրա: Վերց-նենք, օրինակ, թե ինչպիսի են գնահատված երկու հայ խոշոր արձակագիրներ Շիրվանզադեն և Մուրացանը: Գծագրելով Շիրվանզադեի ստեղծագործական պորտրեն, նա կարողանում է ցույց տալ, թե ինչպես նրա կեքտած հերոսները զալարվում են սուր սոցիալական բախումների ոլորտում: Հերոսների սեղմ և հակիրճ բնութագրերում բացահայտվում են մարդկային այն խարակտերները, որոնք միշտ գրավել են Շիրվանզադե արվեստագետին: Վերլուծությունների ընթացքում Հ. Թամրազյանը ցույց է տալիս, որ Շիրվանզադեի տիպերը կանգնած են հասարակական տեղաշարժերի հունում, իրենց վիճակով արտա-ցում են կյանքի մեծ տեղաշարժերը:

Ստեղծագործական այլ խառնվածքով է ներկայացվում Մուրացանը: Մու-րացանի տիպերը, ճիշտ կերպով ընդգծում է հեղինակը, բուրժուական մորալի կրողներ չեն: Նրա երկերը համակված են հայրենի դյուղի, ժողովրդի ճակա-տագրի նկատմամբ անհանգիստ տրամադրություններով: Հ. Թամրազյանը վա-րակում է ընթերցողին Մուրացանի ստեղծագործական միջոցառումով: Վեր հա-նելով «Բեռնի Մարգարտունի» վեպի հերոսների հոգեկան գեղեցկությունը, հմայքը, հեղինակը պատվաստում է աշակերտի մեջ բարձր հայրենասիրական տրամադրություններ:

Ստվաշն պետք է նկատել, որ Հ. Թամրազյանի դասագրքում գրողները մեկը մյուսից շատ մեկուսացված են ներկայացված, չէ որ նրանք բոլորն էլ ապրել ու ստեղծագործել են գրեթե միևնույն ժամանակաշրջանում: Որքան շահեկան կլինեիր, եթե հեղինակը շատ սեղմ ձևով բացահայտեր նրանց թե՛ անձնական, եւ թե՛ ստեղծագործական կապերը, ընդհանրությունները: Այս կապակցությամբ ուղղում ենք նշել նաև, որ գրքում բավարար չափով չի խոսվում նախորդ շրջանի և ընդհանրապես հայ գրականության անցյալի լավագույն տրագիցիաների նշանակության մասին XIX դարի վերջին և XX դարի սկզբի գրականության համար:

Հ. Թամրազյանի մոտ լայնորեն էր ցուցադրվում գրողների ստեղծագործական հնարավորությունները, դրա մեջ է դիտվում նրանց մեծության արտահայտություններից մեկը: Անցյալի ժառանգությունը զնահատելիս այս հանգամանքն ընդգծելը չափազանց կարևոր է: Շիրվանզադեի, Նար-Պոսի, Իսահակյանի, Տերյանի դասական գրականության մյուս ներկայացուցիչների մեծությունը բնութագրվում է նաև նրանով, որ հայ ուսանողական գրականության խոշոր վարձկանները շարունակ չեն խաղացել մի լարի վրա, այլ բնդգրկել են դարաշրջանը իր հարուստ կապերի և փոխհարաբերությունների մեջ՝ մի բան, որ բնականորեն բերել է նաև արտահայտչական միջոցների բազմազանություն: Տրամագրությունների, զգացմունքների, պատկերների, խոհերի ինչպիսի հարստությամբ է ներկայացված դասագրքում, օրինակ, Հովհաննես Թումանյանը: Մեծ բանաստեղծը աշակերտի առջև բարձրանում է իր ողջ հասակով: Իր վերլուծություններում Հ. Թամրազյանը ցույց է տալիս, թե որքան բազմերանգ է Հ. Թումանյանի քնարը: Նրա բանաստեղծություններում, պոեմներում, պատմվածքներում, գրություններում, հեքիաթներում իր արտացոլումն են գտել հայ հասարակ մարդու հոգու բոլոր շարժումները՝ անհանգիստ սպասումն ու կարոտը, սիրո տագնապը ու կսկիծը, ուրախությունը ու անհուն վիշտը: Այս բոլորի մասին Հ. Թամրազյանը գրում է, նրբորեն բացելով երկերի հարուստ գեղարվեստական հյուսվածքը: Կամ զնահատելով Իսահակյանի ստեղծագործությունը, հեղինակը ընդգծում է, թե ինչպես խոսքի վարպետը նոր, անկրկնելի եղանակներ է գտնում իր տրամագրությունները արտահայտելու համար: Նման հայեցակետով են լուսարանվում նաև մյուս գրողների ստեղծագործությունները:

Հ. Թամրազյանի դասագրքի արժանիքներից մեկն էլ այն է, որ նա չի խուսափում գրողների աշխարհայացքում կամ ստեղծագործություններում նկատվող որոշ հակասությունները բացահայտելուց: Նա չի գունազարդում գրողներին, չի պատկերում նրանց ստեղծագործական ուղին որպես ինչ որ հարթ և անխոչընդոտ երթ: Այդ օրյկտիվ մոտեցումը ամենին չի նվազեցնում նրանց ստեղծագործության արժեքը, այլ ընդհակառակը, ընդգծում է, թե ինչպիսի տառապանքով, քաղաքացիական և ստեղծագործական խիզախությամբ են նրանք անդադար կերպով որոնել իրենց հուզող խնդիրների լուծումը:

Գնահատելի է նաև, որ նյութի շարավրման ընթացքում Հ. Թամրազյանը ընդլայնում է աշակերտի գիտելիքները մի շարք գրականագիտական հասկացություններով: Նա տալիս է հետաքրքիր բացատրություններ սյուժեի, կոմպոզիցիայի, լեզվական վարպետության և այլ հարցերի մասին:

Դասագիրքը մեծապես շահում է հեղինակի ձգտումով վարակել մատաղ Տեղեկագիր 1—7

սերնդին այն անհուն սիրով, որ տածել են մեր անվանի գրողները դեպի հայրենի բնությունը, նրա գեղեցկությունը:

Դասագիրքը գրված է կենդանի, աշխույժ լեզվով. այն անպայմանորեն կօգնի աշակերտությանը սովորելու կիրթ, հստակ, գեղեցիկ հայերենին:

Հ. Թամրազյանի այս ձեռնարկը անժխտելի հաջողություն է մեր դասական գրականության պատմության գիտական լուսարաման գործում:

ԳԱՐ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Ա. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ «ՄԱՐՏԻՐՈՍ ՂՐԻՄԵՑԻ»

Վերջին երկու տարում ՀՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Մ. Արեղյանի անվան Գրականության ինստիտուտը հրատարակեց մի քանի մատենագրական քննադրեր և հալագիտական ուսումնասիրություններ՝ նվիրված հայ գրականության միջին դարերի շրջանին. Եղիշեի «Վասն Վարդանայ և հայոց պատերազմին» գիտահամեմատական քննադրը (կազմող՝ Երվանդ Տեր-Մինասյան), «Էջեր հայ միջնադարյան գեղարվեստական արձակից» (առաջաբանով և խմբագրությամբ Կ. Մելիք-Օհանջանյանի), «Արտա վիրապ նամակ»-ի հայերեն թարգմանությունը պահլավերեն քննադրից (թարգմ. Ռուբեն Աբրահամյան), Մ. Ավդալբեկյանի «Պաշտոնը Կեչառեցի» և Ա. Մրապյանի «Հովհաննես Երզնկացի» մենագրությունները:

Հայ ժողովուրդը դարերի ընթացքում ստեղծել է գրական և մշակութային հարուստ մատանություն, որի գիտական արժեքավորումը սովետահայ բանասիրության պատվի գործն է: Այս տեսակետից Մ. Արեղյանի անվան Գրականության ինստիտուտը ողջունելի քայլ է կատարում:

Այժմ հրապարակի վրա է, նույն ինստիտուտի հրատարակությամբ, Ա. Մարտիրոսյանի «Մարտիրոս Ղրիմեցի» մենագրությունը*։ Գիրքը նվիրված է XVII դարի հայ նշանավոր հասարակական գործիչ, ազդասաց, մատենագիր Մարտիրոս Ղրիմեցուն:

Ղրիմեցին կարևոր տեղ ունի հայ ժողովրդի XVII դարի պատմության մեջ: Այդ դարի 60-ական թվականներին Երուսաղեմի պատրիարք Եղիազար Այնթափցին, ձգտելով ստեղծել Էջմիածնից անկախ կաթողիկոսություն և հալության արևմտյան հատվածը անջատել Էջմիածնից, պառակտում էր հայ քաղաքական և եկեղեցական միասնությունը: Մինչդեռ Էջմիածինը հայկական պետականության բացակայության պայմաններում ստանձնել էր ժողովրդի ոչ միայն եկեղեցական, այլև քաղաքական ղեկավարության դերը:

Այնթափյու գործառնությունները կարող էին ծանր հարված հասցնել հայ ժողովրդի մի ամբողջ հատվածի ինքնապահպանությանը և ազգային գոյությանը: Մարտիրոս Ղրիմեցին այդ շրջանի այն սակավաթիվ գործիչներից էր, որն ամբողջ լրջությամբ ըմբռնեց վտանգավոր դրությունը և պալքարի ելավ Այնթափյու հակաթու կաթողիկոսության ծրագիրը խախտնելու համար:

Ղրիմեցու քաղաքական հակառակորդները պատմության մեջ նրա դերը ներկայացրել են դորշ և աղավաղ գովներով: Գրախոսվող աշխատության հեղինակը կարողացել է համոզիչ փաստարկներով ոչ միայն վեր հանել Մար-

* Ա. Ա. Մարտիրոսյան, Մարտիրոս Ղրիմեցի, Երևան, 1958: